10313

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«23» 08 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0152-21

Ձեռնարկողը՝ *«Ասքմեդ Դիզայն» ՍՊԸ*
Ք. Երևան Սայաթ-Նովա 25.2

Գործունեությունը՝ *Գորիսի պր. Խ. Երիցյանի անվան Պետական գյուղատնտեսական քոլեջի շենքի վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ*
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0152-21

<<23>>08 2021թ.

Գորիսի պր. Խ. Երիցյանի անվան Պետական գյուղատնտեսական քոլեջի շենքի վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«Ասքմեդ Դիզայն» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Գորիս համայնք

«Ասքմեդ Դիզայն» ՍՊԸ կողմից ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսվում է՝ Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Առաքելյան փողոց 32 հասցեում գտնվող պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի շենքի վերակառուցում և նոր մասնաշենքի կառուցում: Նախագիծը մշակվել է համաձայն Քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակված տեխնիկական առաջադրանքի, կոմիտեի հետ կնքված պայմանագրի և Գորիսի համայնքապետարանի կողմից տրված 2020թ. օգոստոսի 6-ի N93 նախագծման թույլտվության /ճարտարապետահատակագծային առաջադրանք/ հիման վրա:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ քոլեջի կառուցման և վերակառուցման աշխատանքներն իրականացվելու են անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 0.6748հա ընդհանուր մակերեսով հողամասում: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնականը՝ հասարակական կառուցապատման: Գործունեության նպատակն է՝ սեյսմիկ անվտանգության բարելավման շրջանակներում ապահովել քոլեջի սեյսմիկ անվտանգությունը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ГОСУДАРСТВЕННАЯ СЛУЖБА РА ГОСУДАРСТВЕННОЕ ПРЕДПРИЯТИЕ "ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ"
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Գորիս համայնքում գործող քոլեջի տարածքում: Դիտարկվող տարածքը գտնվում է Սյունիքի մարզի հյուսիս-արևելյան մասում, Բարգուշատի լեռնաշղթայի հյուսիսային լանջին: Գորիս քաղաքը տեղադրված է Որոտանի ձախափնյա վտակ Վարարակի (Գորիս) հովտում: Քաղաքի կենտրոնով անցնում է Գորիս գետը, որը սկիզբ է առնում Իշխանասար լեռան արևելյան լանջից:

Բնութագրվող տարածքը գտնվում է չափավոր շինարարակլիմայական գոտում՝ տաք ամառով, չափավոր ցուրտ ձմեռով, օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +35°C, իսկ բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -20°C: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 744մմ:

Համաձայն հայտի գործունեության իրականացման տարածքը չի առնչվում Գորիս համայնքում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա բնապահպանական տարածքների հետ: Տարածքը գտնվում է արդեն իսկ յուրացված և զարգացած քաղաքային միջավայրում, ուստի տեղանքում չկան Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ:

Ըստ հայտի՝ տեղանքում իրականացված ուսումնասիրությունների ինժեներաերկրաբանական պայմանները գնահատվում են բարենպաստ նախագծվող քոլեջի շինարարական աշխատանքների իրականացման համար:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողատարածքի ընդհանուր մակերեսը՝ 6748.0քմ

Կառուցապատման մակերեսը՝

- գոյություն ունեցող երկհարկանի մասնաշենք – 456.60քմ
- նորակառույց ուսումնական մասնաշենք – 1257.0քմ
- նորակառույց սպորտային մասնաշենք – 412.90քմ
- տնտեսական մասնաշենք - 285.0քմ
- ջերմոց - 219.60քմ
- սպորտ հրապարակ – 680.0քմ
- բարեկարգում, կանաչապատում – 3459.60քմ:

Համաձայն հայտի նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է երկհարկանի մասնաշենքի ուժեղացում/վերակառուցում, տարածքում գոյություն ունեցող մասնաշենքի քանդում և քոլեջի համար նոր մասնաշենքի կառուցում:

Վերակառուցվող մասնաշենքի առաջին հարկում տեղադրված են՝ նախասրահ, բուֆետ, ուսուցչանոց և սանհանգույցներ, իսկ երկրորդ հարկում՝ վարչական նպատակով ծառայող սենյակներ, ուսուցչանոց, տնօրենի աշխատասենյակ և քոլեջի 6 դասարաններ:

Համաձայն հայտի նոր մասնաշենքը նախագծված է չորս հարկանի, որն իրենից ներկայացնում է ուղղանկյուն շինություն և զբաղեցնում է 1257.0 քմ մակերես: Ուսումնական մասնաշենքի հարկայնությունը տարածքի 0.00-ական նիշի նկատմամբ երկու հարկ է ինչը համապատասխանում է առաջադրանքին, բայց քանի որ գոյություն ունեցող ռելիեֆն ունի կտրուկ թեքություն /անկումը 8.0 մ/, 0.00-ական նիշից ներքև ստացվել է ևս երկու հարկ և ունի առանձին մուտք: Մասնաշենքում նախատեսված են՝ նախասրահ, պահեստ, սպորտ դահլիճ, տղաների և աղջիկների համար հանդերձարաններ՝

ՀՀ ՇՐՋԱՊԱՀՊԱՆՈՒ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
РА ЕРЕВАН

իրենց սանհանգույցներով և ցնցուղարանով, հանդիսությունների դահլիճ, գույքի պահեստ, փորձարարական, արտադրական և լաբորոտոր սենյակներ և դասարաններ:

Քոլեջի տարածքում առկա՝ 219.60 քմ մակերես զբաղեցնող ջերմոցը ծառայելու է քոլեջի ուսումնական նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման համար: Նախագծով նախատեսված է նաև կառուցել նորակառույց սպորտային մասնաշենք, որը կզբաղեցնի 412.90քմ մակերես: Մասնաշենքերի միջանկյալ հատվածում նախատեսված է կառուցել սպորտ հրապարակ, որը կղբաղեցնի 680.0քմ մակերես:

Տարածքում առկա է քանդման ենթակա մասնաշենք /որի մակերեսը 720 քմ է/: Բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է իրականացնել տարածքի գոյություն ունեցող բազալտե և բետոնե եզրաքարերի փոխարինում նորերով: Տարածքի երթևեկելի մասերում և մայթերում նախատեսվում է նոր ասֆալտի իրականացում՝ քանդելով հին ծածկույթը:

Վերակառուցման աշխատանքները ներառում են նաև շենքի սեյսմոկայունության բարձրացման, ջերմային կորուստների նվազեցման և շենքի էներգոխնայողության բարձրացման միջոցառումները:

Ըստ գործող շինարարական նորմերի՝ նախատեսվում է նաև նոր էլեկտրասնուցման և լուսավորության ցանցեր, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու և գազամատակարարման ցանցեր, ինչպես նաև նոր օդափոխության և ջեռուցման համակարգեր:

Քոլեջն ապահովված է լինելու հաշմանդամություն ունեցող անձանց ուսման հիմնական պահանջներին: Սակավաշարժ խմբերի համար հին մասնաշենքում նախատեսված է վերելակ, ինչպես նաև համապատասխան վայրերում՝ թեքհարթակներ:

Հակահրդեհային պայմանները ապահովելու համար գոյություն ունեցող մասնաշենքում նախատեսված են երկու լրացուցիչ աստիճանավանդակներ: Նկուղային հարկից նախատեսված են դեպի բակ երկու ելք: Տանիքի ջրահեռացումը կատարվելու է կազմակերպված:

Նոր կառուցվող մասնաշենքում նախատեսվում է ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու և գազամատակարարման ցանցեր: Ջրամատակարարումը, կոյուղին և տաք ջրամատակարարումն իրականացվելու են գոյություն ունեցող ենթակառուցվածքներով:

Աշխատանքային նախագծով բոլոր մասնաշենքերում նախատեսված է ջեռուցման ներքին համակարգ, որի համար որպես ջեռուցման աղբյուր հանդիսանում է տարածքում նախատեսված կաթսայատունը: Տարածքում առկա 285.0քմ մակերեսով շինությունը կծառայի որպես կաթսայատուն: Կաթսայատանը նախատեսված է տեղադրել երկու հատ 350 կվտ դրվածքային հզորությամբ գազաջեռուցիչ կաթսաներ:

Շինարարական աշխատանքներից բուսահող չի առաջանալու, քանի որ տարածքը ամբողջովին կառուցապատված է:

Շինարարության նորմատիվ ժամկետը հաշվարկվել է 24 ամիս:

Նախատեսվող գործունեությունը ենթադրում է 847մ^3 ծավալի հողային հանույթ: Հանվող 610.8մ^3 ծավալով հողային զանգվածը կօգտագործվի որպես հետլիցք, մնացած 235.8մ^3՝ կտեղափոխվի 5կմ հեռավորության վրա գտնվող շինարարական թափոնների աղբավայր: Քանդման աշխատանքներից առաջացող ասֆալտբետոնե ծածկույթը՝ 115.08մ^3

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒԱԿԱՅԻՆ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ

ծավալով և 3309.4մ³ ծավալով շինարարական աղբը տեղափոխվելու են Գորիս համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված՝ համապատասխան քաղաքային աղբավայրեր: Շինարարության փուլում առաջանալու է մոտ 10 կգ/օր կենցաղային աղբ, ինչը կհավաքվի կենացաղային աղբի համար նախատեսվող տարաներում և կանոնավոր կերպով կհեռացվի հասարակական աղբամաններ:

Շինարարության ընթացքում մակերևութային ջրերի որակի վրա որևէ ազդեցություն չի կանխատեսվում, քանի որ շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում: Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը կկատարվի կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով՝ բացառելով շինհրապարակից հնարավոր արտահոսքերը: Այդ նպատակի համար տարածքի ցածրադիր մասերում տեղադրվելու է անձրևընդունիչ հորեր, որտեղից տարածքի անձրևաջրերը և շինհրապարակի հոսքաջրերը կազմակերպված ձևով կհեռացվեն տարածքից և կմիացվեն գործող քաղաքային հեղեղատար ցանցին՝ համաձայն տեխնիկական պայմանի:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար: Ջրցանի համար ջրի օրական ծախսը կկազմի՝ 0.3մ³, իսկ տարեկան՝ 46.2մ³/շին.ժամ, իսկ խմելու և կենցաղային նպատակների 90.4մ³/շին.ժամ, միջին օրեկան 0.587մ³: Ջրամատակարարումն իրականացվելու է տեխնիկական պայմանների համաձայն:

Շինարարության ողջ ընթացքում առաջացող յուղերի բանեցված մնացորդները (գնահատվում են ≤50լ) կհավաքվեն և կպահվեն հերմետիկ փակ և մետաղական տարաներում, իսկ հետագայում կհանձնվեն վերջիններիս վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպության: Հրապարակում քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մատաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի վրա հնարավոր աղտոտման ռիսկերը:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ բուլդոզեր, ավտոբետոնապոմպ, էքսկավատոր, ավտոինքնաթափ, ավտոբետոնախառնիչ, ամբարձիչ, եռակցման ագրեգատ և այլն: Նախատեսվող գործունեության շինարարության համար անհրաժեշտ բետոնը և շաղախը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացած տրանսպորտային միջոցներով:

Համաձայն հայտի նախագծով նախատեսված աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել, իրականացնել ցանկապատման աշխատանքներ: Գոյություն ունեցող մասնաշենքի հարևանությամբ առկա կանաչապատ մակերեսները պահպանվելու են: Տարածքում առկա ծառերը չեն ենթարկվելու շինարարական աշխատանքների ազդեցության, կամ հատման:

Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ, նախատեսվում է նոր բուսահողի լիցք: Կանաչապատման համար օգտագործվելու է սոսի, կաղնի, գնդաձև ակացիա և հացենի և թփատեսակներ: Տարածքում գոյություն ունեցող կանաչապատ տարածքների մակերեսները կազմում են 2500քմ: Նոր կանաչապատ մակերեսները կկազմեն մոտ 1000 քմ մակերես, հասցներով քոլեջի ողջ տարածքում

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ "ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ" ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ГОСУДАРСТВЕННОЕ НЕКОММЕРЧЕСКОЕ ПРЕДПРИЯТИЕ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ "ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ"
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

կանաչապատման ընդհանուր մակերեսը 3459.60քմ: Ոռոգումն իրականացվելու է գոյություն ունեցող ցանցից: Նոր տարածքների ոռոգումը կապահովվի պահանջվող ջրաքանակին համապատասխան՝ 5.5 խմ/օր ոռոգման համակարգի ջրի ծախսով:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ՝ մինչև շինարարության ավարտը: Համաձայն նախնական գնահատման հայտի՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են հայտի միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով շինհրապարակի պարբերաբար ջրցանում,
- շինարարական մեքենաների երթևեկության կազմակերպում՝ համապատասխան չափաքանակներով ծածկված բեռնատարներով և շինհրապարակից դուրս եկող ավտոմեքենաների լվացված անվադողերով,
- շինհրապարակում նյութերի և թափոնների պահումը բետոնե տարածքում՝ ծածկված վիճակում,
- շինհրապարակի ցանկապատում, ցուցանակների ու պաստառների տեղադրում,
- փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի հսկողություն՝ գործիքային չափագրումների կատարմամբ,
- աղմուկ առաջացնող աշխատանքներն իրականացվելու են թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին, մինչև ժամը 18:00,
- անսարք վիճակում մեքենաների և սարքավորումների օգտագործման բացառում,
- մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով կանոնավոր մոնիթորինգի իրականացում,
- բոլոր մեքենաների վրա համապատասխան խլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,
- շինարարության ընթացքում աղբի ու շինարարական թափոնների տարանջատում, դասակարգում ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ և վտանգավոր,
- քոլեջի կանաչապատված տարածքի աճի և վիճակի մշտադիտարկումներ,
- աշխատանքների և արտակարգ իրավիճակների անվտանգության ապահովում և այլն:

Պատճառաբանական մաս. նախատեսվող գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող դպրոցի տարածքում: Գործունեության շինարարությունը և շահագործումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Հայտով նախատեսված միջոցառումների կատարման արդյունքում կնվազեցվեն շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները: Օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսվող գործունեության վերաբերյալ Սյունիքի մարզի Գորիս համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել: Փորձաքննական

ՀՀ ԲՆՕՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
"ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO
ՀՀ ԵՐԵՎԱՆ
РА ЕРЕВАН
РА YEREVAN
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՑԵ
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՑԵ
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, քաղաքաշինության կոմիտեն, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Հայտը լրամշակվել է, հաշվի առնելով նաև ստացված դիտողությունները և առաջարկությունները:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա ցերեկային ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների բեռնվածությունը:
3. Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերն ու կանոնները, ներառյալ առողջապահության նախարարաի 2017թ. մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանի պահանջները:
5. Անհրաժեշտ է ապահովել հայտով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ասքմեդ Դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գորիսի պր. Խ. Երիցյանի անվան Պետական գյուղատնտեսական քոլեջի շենքի վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝ Ա. Վարդանյան